# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ ՈՐՈՇՈՒՄ — ———— N - Ն ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 5-Ի N 1318-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Նախագիծ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**

**ՈՐՈՇՈՒՄ**

- **———— N - Ն**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ**

**5-Ի N 1318-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Հսկիչ-դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ-դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգն ու հսկիչ-դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու մասին» №1318-Ն որոշման Հավելված №1-ի (այսուհետ՝ Հավելված) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 5-րդ կետի 1-ին ենթակետի «թ)» և 2-րդ ենթակետի «է)» պարբերությունները.
2. Հավելվածի 9-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «քարտերը պետք է ընդգրկված լինեն ներքին կորպորատիվ ցանցի մեջ, որոնց հասցեների բազմությունը (IP & MASK) պետք է նախապես համաձայնեցված լինի հարկային մարմնի տեղեկատվական համակարգի հետ.»
3. Հավելվածի 9-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «քարտերը պետք է ապահովեն հասանելիություն հարկային մարմնի ՀԴՄ-ների սպասարկման սերվերին.»

4. Հավելվածի 9-րդ կետի 6-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «քարտեր տրամադրող օպերատորը պետք է տրամադրի նաև ներքին կորպորատիվ ցանցից երեք IP հասցեներ՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգի համար.»
5. Հավելվածի 9-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «օպերատորի համակցման թողունակությունը հարկային մարմնի համակարգից պետք է լինի նվազագույնը 2 մբ/վ:»
6. Հավելվածի 11-րդ կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ՝ «Ցանցային կապին վերաբերող՝ հարկային մարմնի տեղեկատվական համակարգի հետ աշխատանքի համար անհրաժեշտ տվյալները (SIM քարտի համար, ֆիքսված հեռախոսահամար, IP հասցե և այլն) հարկային մարմնին տրամադրվում են սպասարկման կենտրոնների կողմից:»
7. Ուժը կորցրած ճանաչել Հավելվածի 12-րդ կետի 12-րդ ենթակետը:
8. Հավելվածի 14-րդ կետից հանել «պլաստիկ քարտերի միջոցով հաշվեգրված գումարների,» բառերը:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ